

5 առավել հաճախ տրվող հարցեր

1. Ո՞րն է ապահովագրվող ռիսկերի փաթեթը

Ավտոմեքենայի ապահովագրությունը ներառում է հետևյալ ռիսկերը.

Ավտոմեքենայի ֆիզիկական վնաս, այդ թվում՝ ճանապարհատրանսպորտային պատահարի կամ այլ արտաքին ազդեցության հետևանքով, հրդեհի, երրորդ անձանց անօրինական գործողությունների հետևանքով, այդ թվում՝ գողություն, կողոպուտ, առևանգում:

2. Որքա՞ն արժե ավտոմեքենայի ապահովագրությունը

Տարեկան ապահովագրության սակագինը կազմում է ապահովագրական գումարի 2.5%:

3. Արդյո՞ք կարող եմ իրականացնել ավտոմեքենայի մասնակի ապահովագրում

Ապահովագրությունը տրամադրվում է միայն Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ կողմից տրամադրված ավտոմեքենայի վարկով ձեռքբերված ավտոմեքենաների համար և ապահովագրությունը պետք է իրականացվի մեքենայի շուկայական արժեքի ամբողջ գումարի չափով:

4. Ինչպիսի՞ չհատուցվող գումարներ են կիրառվում ավտոտրանսպորտային միջոցների համար

1. Ապահովագրական գումարի 1%, ոչ պակաս քան 50,000 ՀՀ դրամ
2. Եթե դեպքի պահին ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցը վարել է 2-3 տարվա վարորդական փորձ ունեցող անձը, ապա չհատուցվող գումարը կկազմի ապահովագրական գումարի 2%-ը, բայց ոչ պակաս քան 100,000 ՀՀ դրամ, իսկ 6 ամսից մինչև 2 տարի վարորդական փորձի դեպքում՝ ապահովագրական գումարի 3%-ը, բայց ոչ պակաս, քան 150,000 ՀՀ դրամ
3. Ապահովագրություն չի տրամադրվում վեց ամսից պակաս վարորդական փորձ ունեցող վարորդներին
4. Գողության դեպքում չհատուցվող գումարը կազմում է ապահովագրական գումարի 5%-ը եթե առկա է հակաառևանգիչ սարքավորում, հակառակ դեպքում՝ 10%

5. Արդյո՞ք ավտոմեքենայի զննումը անհրաժեշտ է ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության համար

Այո, ավտոմեքենայի զննումը պարտադիր է ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն ձեռք բերելիս: Պայմանագրի ստորագրումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ աշխատակիցները կկապվեն Ձեզ հետ և կկազմակերպեն Ձեր մեքենայի զննումը: Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում միայն զննման անցկացումից հետո:

Թարմացվել է՝ 17/01/2019 15:00